

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶՄԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

27 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, ի դեմս տնօրեն Աննա Բոյաջյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Ուսումնասիրել բջջի ակտիվության կարգավորման մեխանիզմները նորմայում և դրանց խանգարման հիմքում ընկած գործընթացների պատճառները օրգանիզմի տարբեր պայթյունի վիճակներում» ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույնպայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 152811000 /մեկ հարյուր հիսուներկու միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար / ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե.

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր

եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով սրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 152811000 /մեկ հարյուր հիսուներկու միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար / ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 140586100/մեկ հարյուր քառասուն միլիոն հինգ հարյուր ութսունվեց հազար հարյուր / ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված

միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աճի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

- ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,
- բ. Առաջադրանքը (հավելված 1),
- գ. Օրացուցային պլանը (հավելված 2),
- դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),
- ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
ք. Երևան, Հասրաթյան 7

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ բանկ ՓԲԸ Ձեյթունի մ/ճ
Հ/հ 220305140422000,

ՀՎՀՀ 00008732

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան


ՌԱՄԻՆՍԻԱՆ ՏՐԱՆՍԳԵՆԱՆ
(ստորագրության)



Տնօրեն՝ Ա. Բոյսյան


(ստորագրության)



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում « Ուսումնասիրել բջջի ակտիվության կարգավորման մեխանիզմները նորմայում և դրանց խանգարման հիմքում ընկած գործընթացների պատճառները օրգանիզմի տարբեր պայթուցիկ վիճակներում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը

Բջջային ակտիվության խախտումների մոլեկուլային էթիոպատոմեխանիզմների ուսումնասիրությունը կենդանի օրգանիզմի ախտաբանական վիճակներում և շրջակա միջավայրի վատթարացման պայմաններում և դրանց հայտնաբերման ու կարգավորման արդյունավետ եղանակների մշակումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Աշխատանքը պետք է իրագործվի պատշաճ ձևով, ժամանակակից եղանակների կիրառմամբ: Ստացված տվյալները պետք է ենթարկվեն վիճակագրական վերլուծության, արդյունքները քննարկվեն և հստակեցվեն եզրակացություններում:

4. Աշխատանքի բովանդակությունը

4.1. Աշխատանքի հետազոտական հիմնախնդիրները

- Բջջային ակտիվության կարգավորման մոլեկուլային մեխանիզմների և նրանց խանգարումների ուսումնասիրությունը օրգանիզմի տարբեր ախտաբանական վիճակներում:
- Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պայթումեխանիզմների պարզաբանումը:
- Ախտաբանական գործընթացների առաջացման, զարգացման և բարդացման մեջ ներգրավված սպիտակուցային բնույթի կենսաակտիվ միացությունների՝ միջնորդանյութերի, կարգավորիչների, ֆերմենտների և ազդանշանային ուղիների բաղադրիչների գենետիկական պոլիմորֆիզմների ուսումնասիրությունը: Հայկական

պոպուլյացիային բնորոշ գենետիկական պոլիմորֆիզմների բացահայտումը՝ ինչպես նորմայում, այնպես էլ օրգանիզմի ախտաբանական վիճակներում:

- Ախտաբանական գործընթացների ուսումնասիրությունը փորձարարական և տեսական մոդելավորման միջոցով (կենդանական մոդելներ, համակարգչային մոդելներ, բջջային կուլտուրաների կիրառման վրա հիմնված մոդելներ):
- Ախտաբանական գործընթացների հիմքում ընկած կամ դրանցով խթանվող իմունային պատասխանի խանգարումների մոլեկուլա-բջջային մեխանիզմների *in vivo*, *in vitro* և *in situ* ուսումնասիրություններ:
- Կասկադային՝ ազդանշանային, կատալիտիկ և էֆեկտոր-համակարգերի ու նրանց կարգավորիչների ուսումնասիրությունը ախտաբանական վիճակների ժամանակ:
- Հայերի գենոմի ուսումնասիրությունը՝ պաթո-, էկո-, իմունո- և պոպուլյացիոն գենոմիկայի մոտեցումների կիրառմամբ:
- Կենսաբանական ուղիների, կենսամոլեկուլների կառուցվածքա-ֆունկցիոնալ հատկությունների և փոխազդեցությունների, ինչպես նաև գեների էքսպրեսիայի ուսումնասիրությունը կենսաինֆորմատիկայի ու մոլեկուլային մոդելավորման եղանակներով:
- Մարդու և կենդանիների հիվանդությունների կանխորոշման, կանխարգելման, ընթացքի մոնիթորինգի և բուժման նոր արդյունավետ միջոցների մշակում:
- Մարդու և կենդանիների հիվանդությունների ախտորոշման զգայուն ու սպեցիֆիկ մեթոդների մշակում:
- Իմունային պատասխանի խախտումների մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների ուսումնասիրությունը և նրանց կարգավորմանը նպաստող եղանակների մշակում:
- Կենդանի օրգանիզմի վրա կենսաակտիվ ու տոքսիկ նյութերի, սննդամթերքի և նրա որակի, նոր դեղամիջոցների և շրջակա միջավայրի տարբեր գործոնների ազդեցության գնահատում:

Հիմնախնդիրների լուծման համար կիրառվելու են.


- ✓ Գենոմիկայի եղանակները,
- ✓ Բջջային կուլտուրաների տեխնոլոգիաները,
- ✓ Մոլեկուլա-բջջային իմունաբանության եղանակները,
- ✓ Պրոտեոմիկայի և լիպիդոմիկայի եղանակները,
- ✓ Տեղեկատվական կենսաբանության եղանակները՝ կենսաինֆորմատիկա, կենսավիճակագրություն, մոլեկուլային մոդելավորում:

Կատարողներ՝

- Կիրառական մոլեկուլային կենսաբանության բաժին, վար. Ա. Բոյաջյան
- Բջջի կենսաբանության և վիրուսաբանության լաբորատորիա, վար. Զ. Կարալյան
- Բջջային ակտիվության կարգավորման լաբորատորիա, վար. Յու. Թադևոսյան
- Մոլեկուլային գենետիկայի լաբորատորիա, վար. Ժ. Կծոյան
- Մոլեկուլային էնզիմաբանության լաբորատորիա, վար. Ժ. Հակոբյան
- Մոլեկուլային թաղանթաբանության լաբորատորիա, վար. Լ. Հովսեփյան
- Էթնոգենոմիկայի լաբորատորիա, վար. Լ. Եպիսկոպոսյան
- Էլեկտրոնային մանրադիտակաբանության լաբորատորիա, վար. Կ. Հովնանյան
- Համակարգչային մոդելավորման լաբորատորիա, վար. Կ. Նազարյան
- Իմունային պատասխանի կարգավորման խումբ, ղեկ. Դ. Պողոսյան
- Կենսահինֆորմատիկայի խումբ, ղեկ. Ա. Առաքելյան
- Մոլեկուլաբջջային իմունաբանության խումբ, ղեկ. Գ. Մանուկյան

5. Նկարագրված գիտական աշխատանքների արդյունքների ներկայացումը կարտահայտվի հոդվածների, գրքերի, մենագրությունների, դիպլոմային աշխատանքների, ատենախոսությունների, արտոնագրերի, հաշվետվությունների, ինչպես նաև միջազգային և ազգային գիտաժողովներում ու ՀՀ ԳԱԱ նախագահությունում զեկուցումներով հանդես գալու ձևով:

Տնօրեն՝ Ա. Բոյաջյան



ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման «Ուսումնասիրել, բջժի ակտիվության կարգավորման մեխանիզմները նորմալում և դրանց խանգարման հիմքում ընկած գործընթացների պատճառները օրգանիզմի տարբեր պայթուցիկ վիճակներում» ծրագրի

Երականացվելիք միջոցառումներ						
NN Ը/Կ	Անվանումը	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1	2	3	4	5	6	7
I	Բջջային ակտիվության կարգավորման մոլեկուլային մեխանիզմների և նրանց խանգարումների ուսումնասիրությունը օրգանիզմի տարբեր ակտաբանական վիճակներում:	Բջջային ակտիվության կարգավորման մոլեկուլային մեխանիզմների և նրանց խանգարումների ուսումնասիրությունը օրգանիզմի տարբեր ակտաբանական վիճակներում:	Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:	Հոդվածներ, գրքեր, մենագրություններ, դիպլոմային աշխատանքներ, ատենախոսություններ, արտոնագրեր, հաշվետվություններ, զեկույցներ:	31.12.2015	
II	Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանումը:	Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանումը:	Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:	Հոդվածներ, գրքեր, մենագրություններ, դիպլոմային աշխատանքներ, ատենախոսություններ, արտոնագրեր, հաշվետվություններ, զեկույցներ:	31.12.2015	

1	2	3	4	5	6	7
III	<p>Ախտաբանական գործընթացների առաջացման, զարգացման և բարդացման մեջ ներգրավված միջնորդանյութերի, կարգավորիչների, ֆերմենտների և ազդանշանային ուղիների բարդորիչների գենետիկական պոլիմորֆիզմների ուսումնասիրությունը: Հայկական պապուլյացիային բնորոշ գենետիկական պոլիմորֆիզմների բացահայտումը՝ ինչպես նորմայում, այնպես էլ օրգանիզմի ախտաբանական վիճակներում:</p>	<p>Ախտաբանական գործընթացների ուսումնասիրությունը կենդանական մոդելների, համակարգչային մոդելների, բջջային կուլտուրաների կիրառման վրա հիմնված մոդելների միջոցով:</p>	<p>Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:</p>	<p>Հոդվածներ, գրքեր, մենագրություններ, դիպլոմային աշխատանքներ, ասենսիստություններ, արտոնագրեր, հաշվետվություններ, զեկույցներ:</p>	31.12.2015	152811000
IV	<p>Ախտաբանական գործընթացների ուսումնասիրությունը փորձարարական և տեսական մոդելավորման միջոցով:</p>	<p>Ախտաբանական գործընթացների ուսումնասիրությունը կենդանական մոդելների, համակարգչային մոդելների, բջջային կուլտուրաների կիրառման վրա հիմնված մոդելների միջոցով:</p>	<p>Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:</p>	<p>Հոդվածներ, գրքեր, մենագրություններ, դիպլոմային աշխատանքներ, ասենսիստություններ, արտոնագրեր, հաշվետվություններ, զեկույցներ:</p>	31.12.2014	
V	<p>Ախտաբանական գործընթացների հիմքում ընկած կամ դրանցով խթանվող խոնոային խթանվող խոնոային պատասխանի խանգարումների մոլեկուլաբջջային մեխանիզմների <i>in vivo</i>, <i>in vitro</i> և <i>in situ</i> ուսումնասիրություններ:</p>	<p>Ախտաբանական գործընթացների հիմքում ընկած կամ դրանցով խթանվող խոնոային պատասխանի խանգարումների մոլեկուլաբջջային մեխանիզմների <i>in vivo</i>, <i>in vitro</i> և <i>in situ</i> ուսումնասիրություններ:</p>	<p>Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:</p>	<p>Հոդվածներ, գրքեր, մենագրություններ, դիպլոմային աշխատանքներ, ասենսիստություններ, արտոնագրեր, հաշվետվություններ, զեկույցներ:</p>	31.12.2015	
VI	<p>Կասկադային - համակարգերի ու նրանց կարգավորիչների ուսումնասիրությունը ախտաբանական վիճակներում:</p>	<p>Կասկադային՝ ազդանշանային, կասալի-տիկ և էֆեկտոր-համակարգերի ու նրանց կարգավորիչների ուսումնասիրությունը ախտաբանական վիճակների ժամանակ:</p>			31.12.2015	

	վիճակների ծամանակ:					
VII	Հայերի զենամի ուսումնասիրությունը:	Հայերի զենամի ուսումնասիրությունը պաթոն-էկո-, իմունո- և պոպուլյացիոն զենամիկայի մոտեցումների կիրառմամբ:			31.12.2015	
VIII	Կենսաբանական ուղիների ուսումնասիրությունը:	Կենսաբանական ուղիների, կենսամոլեկուլների կառուցվածքա-ֆունկցիոնալ հատկությունների և վախճանագրությունների, ինչպես նաև զենների էքսպրեսիայի ուսումնասիրությունը կենսաինֆորմատիկայի ու մոլեկուլային մոդելավորման եղանակներով:			31.12.2015	
IX	Մարդու և կենդանիների հիվանդությունների կանխորոշման, կանխարգելման, ընթացքի մոնիթորինգի և բուժման նոր արդյունավետ միջոցների մշակում:	Մարդու և կենդանիների հիվանդությունների կանխորոշման, կանխարգելման, ընթացքի մոնիթորինգի և բուժման նոր արդյունավետ միջոցների մշակում:			31.12.2015	
X	Իմունային պատասխանի խախտումների կանխորոշման, մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների ուսումնասիրությունը և նրանց կարգավորմանը նպաստող եղանակների մշակում:	Իմունային պատասխանի խախտումների մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների ուսումնասիրությունը և նրանց կարգավորմանը նպաստող եղանակների մշակում:			31.12.2015	
XI	Կենդանի օրգանիզմի վրա կենսասակտիվ ու ստրսիկ նյութերի, սննդամիջոցների և նրա սննդամիջոցների և նրա սննդամիջոցների և շրջակա միջավայրի տարբեր գործոնների	Կենդանի օրգանիզմի վրա կենսասակտիվ ու ստրսիկ նյութերի, սննդամիջոցների և նրա սննդամիջոցների և նրա սննդամիջոցների և շրջակա միջավայրի տարբեր գործոնների			31.12.2015	

ազդեցության գնահատում:					
Ընդամենը				1528 1000 ՀՀ դրամ	

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

Ռ. Մարտիրոսյան
 ԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ
 ԱԿԱԴՄԻԱ



ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

Տնօրեն՝ Ա. Բունջյան



Հավելված 3
«27» 01 2015թ.
N 6-18 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման «Ուսումնասիրել բջջի ակտիվության կարգավորման մեխանիզմները նորմալում և դրանց խանգարման հիմքում ընկած գործընթացների պատճառները օրգանիզմի տարբեր պայթուցիկ վիճակներում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Աննա Բոյաջյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձևաբերել


«27» 01 2015թ. N 6-18 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 152811000 /մեկ հարյուր հիսուներկու միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Արարատ քանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
ք. Երևան, Հասարայան 7
ԱԿԲԱ-ԿԸԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ քանկ ՓԲԸ Զեյթունի մ/ճ
Հ/հ 220305140422000, ՀՎՀՀ 00008732

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան


ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(ստորագրության)



Տնօրեն՝ Ա. Բոյաջյան



